Ն.Մ.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում ենք բոլոր կանանց Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի առիթով:

Այսօր հնչում է Փրկչի աշխարհ գալու մասին մեծ ավետիքը, որն առաջինը լսեց Սուրբ Տիրամայրը և ընդունեց խոնարհ ու Աստծուն սիրող սրտով: Տոն է հույսի ու հավատի նորոգության, քանզի ավետավոր հրեշտակի շուրթերով ամենքս լսում ենք. «Տերը քեզ հետ է»: Այս հավատով, որ Աստված մեզ հետ է և Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ, թող որ բացվեն մեր կյանքի բոլոր առավոտները, և իրականացվեն մեր բոլոր գործերը:

Տիրամոր հավատավոր ու անբիծ կերպարը քրիստոնեական մեր կյանքում միշտ եղել է ներշնչման աղբյուր ու բարի օրինակ, և խորհրդանշական է, որ Ավետման տոնը հիշատակում ենք նաև իբրև տոն մայրության ու գեղեցկության և նվիրականացնում իբրև Օրհնության Օր՝ մայրության բերկրանքին սպասող կանանց:

Մեր աղոթքն է, որ Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն և Սուրբ Տիրամոր շնորհներով զարդարի բոլոր տիկնանց և օրիորդաց՝ պարգևելով նրանց երջանիկ ու արևշատ կյանք, միշտ զորացյալ հավատ, որպեսզի կրթեն ու մեծացնեն արժանավոր զավակներ՝ աստվածասեր, եկեղեցասեր ու հայրենասեր:

Ս. Էջմիածին,
7 ապրիլի 2004 թ.